



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

447-6
ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ № 6
N ԳԱՐԵՐ ՅԵՎ. ՄԱՐԴԻԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ 6

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

**Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ը
ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե**

Պ Ր Ա Կ Զ

Փոխադրույունն ուսանեցից ՅԵ. ԼՍ.ԼՍ.ՅՍ.ՆԻ

Գ. ՏՐԱՄԱՐԱԿՈՒՅՐՅՈՒՆ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՅԵՐԵՎԱՆ—1928

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԳՊՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
№ 6 ԳԱՐԵՐ ՅԵՎ. ՄԱՐԳԻԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԻ № 6


ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

**Ա. Շ Խ Ա. Տ Ա. Ն. Բ. Ը.
ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե**

ՊՐԱԿ Զ.

Փոխադրությունն ուղարկեցից ՅԵ. Լ. Ս. Լ. Ս. Յ. Ս. Ն. Ե

Գ ՇՐՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ե Ր Տ Ա Ր Ա Կ Յ Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

ՅԵՐԵՎԱՆ-1928

159334

A 7990

№ 778

Գրասեղանի № 786 (բ)

Տիրած 4000

Պետերբուրգի աստիճանի տպարանի վարչարչապետություն

1. ԲՈԼՈՐԸ ՍԵՐՏ ԿԱՊՎԱԾ ԵՆ

Ձանդը հնչեց. չերեխաներն աղմկալի խմբերով
լցվեցին դասարան: Այնտեղ սեղանի առջև ար-
դեն նստած և ուսուցիչը: Նրա առջև դրված
էլին չերկու թղթի փաթուղի: Յերբ աշակերտ-
ները բռնեցին իրենց տեղերն, ուսուցիչն ասաց.

— Այսօր չես կամենում եմ ձեզ մի պատ-
մություն պատմել: Այդ, հավանորեն, նույնպես
ուշադրավ կլինի, ինչպես և հեքիաթը, միայն
ուշադրությամբ լսեցեք: .

Ուսուցիչը բացեց փաթուղիները և հանեց
հաճարի հացի մի կտոր և գորշ գուլնի մի ինչ-
վոր կոշտ: Նա աջ ձեռքում բռնեց հացը, ձա-
խում կոշտը, վեր բարձրացրեց և հարցրեց.

— Ի՞նչ կա իմ ձեռքում:

— Այս հաց ե, իսկ այն՝ քար, — պատասխա-
նեցին միքանի աշակերտներ:

— Վո՞չ, քար չե, — ասացին մյուսները: Մա
հողի կոշտ ե:

— Վո՞չ քար ե և վո՞չ հող, — ասաց ուսուցիչը,
— այլ յերկաթի հանք: Այս տեսակ հանքից հալում
են չերկաթ: Այս կոշտը մեր գոլրոցն է ընկել

Ուրալից, մեզանից միքանի հազար վերստ հե-
ռավորութունից: Իսկ այն ալյուրը, վորից թխած
ե այս հացը, աղացված ե այն հաճարից, վոր
բուսել ե մեր գյուղի դաշտերում: Ի՞նչ եր կար-
ծում, մեր հացը վորեւե կախու՞ն ունի՞ այն չեր-
կաթի հանրից, վոր հանվում ե հեռու Ուրալում:

Յերեխաները լու՛ւմ ելին: Նրանց չերեսի վրա
նկատելի չեր տարակուսանք: Վերջապես մի չե-
րեխա անվստահ ձայնով ասաց.

— Տարորինակ ե... հացը ցանում են մեր
դաշտերում, արոտատեղի չեախում, իսկ հանքը
հանում են հեռու Ուրալում:

Ուսուցիչը դրեց սեղանի վրա հացն ու հանքը
և ասաց.

— Ասել ե, դուք կարծում եք, վոր հացն իր
տեղն ե, հանքն իր տեղը և չերկուսի մեջ
առնչութուն չկա:

Առաջին կարգում նստած եր տասներկու
տարեկան մի խարստչաշ տղա, Գրիգոր անունով,
չեռանդուն և աշխուժ, նա բոլոր ժամանակ
մտածում եր, նույնիսկ ճակատը կնճռոտել եր:
Յե՛վ մի միտք ծագեց նրա գլխում: Նրա աչքերը
փայլեցին, նա վեր թռավ տեղից և վոչ թե
ասաց, այլ բղավեց.

— Յես գիտեմ:

— Ի՞նչ գիտես, — հարցրեց ուսուցիչը.

Գրիգորը վրա բերեց.

— Հողը վարում են արորով, իսկ արորի խոփը չերկաթից ե: Նաև տափանի ատամները չերկաթից են... Հետո մանգաղն ու գերանդին... Իսկ չերկաթը հանքից ե... Ասել ե, հացն ու հանքը միմյանց հետ առնչութիւն ունեն:

— Ապրես, Գրիգոր, — ասաց ուսուցիչը ժպտով նայելով չերեխայի կարմրած չերեսին. — Նստիր տեղդ:

Գրիգորն ուղիղ ասաց, — արտասանեց ուսուցիչը, գիմելով ամբողջ դասարանին. — Մի ժամանակ մարդիկ չգլտեցին, թե չերկաթն ինչ ե, վարում ելին փայտե գութանով կամ արորով և բավականանում ելին քարե կացիններով ու գանակներով: Այն ժամանակ ամեն մարդ ինքն իրեն համար գործիք եր շինում, ուրիշի կարիքը չեր գգում: Բայց այդ ժամանակներն անցան: Այժմ առանց չերկաթե գործիքների չի կարելի անտեսութիւնը տանել: Այստեղից հազարավոյ Վերստեր մեզ անտեսանելի մարդիկ խփում են մուրճերով, գետնից չերկաթ հանում, իսկ ձեր հայրերն ու չեղբայրները վարում են իրենց արտերը հենց այդ չերկաթից շինած գործիքներով: Հողի մշակութիւնը հաստատապէս կապված ե չերկաթի գործարանների հետ և չի կարող առանց նրանց գոյութիւն ունենալ: Բայց և գործաբան-

ները չելին կարող գոյութիւնն ունենալ, չեթե վոր չերկրագործներ չլինեյին: Նրանք պատրաստում են հաց, վորով կերակրվում են այդ գործարաններում աշխատողները: Ասել ե, այս կապը փոխադարձ ե:

Յերեխաներն ուշադրութիամբ լսում ելին ուսուցչին: Նրանք նույնիսկ մոռացել ելին հետեւի ժամացուցին՝ իմանալու, թե դեռ շատ ե մնացել, վոր դասը ավարտեն: Իսկ ուսուցիչը շարունակում եր պատմել:

— Իսկ ինչ կասեր, չերեխաներ, այն մասին, թե վորեւե կապ կա այս կտորների—հանջի ե հացի վիճակի մեջ, ինչպես ե սրանց ու մեր դպրոցի վիճակի մեջ. Յեթե ուշադրութիամբ նայենք, մեզ կթվա, իբր վոչ մի կապ չկա. չե՞ վոր դպրոցում վար չեն անում, հաց չեն թխում, ե վոչ ել չերկաթ հալում: Այս բոլորը ճիշտ ե: Բայց ասա դու, Գրիգոր, կարո՞ղ ե դպրոց լինել վոչ նստակցաց մարդկանց մաս, վորսորդների, թափառականների: Կլինեյին այնտեղ աշակերաներ, չեթե նույնիսկ մի հրաշքով հիմնվեր նրանց համար դպրոց: — Վոչ:

— Իսկ դու, Պետրոսյան, ինչ ես կարծում, թաթարների արշավանքի ժամանակ կարո՞ղ եր գոյութիւնն ունենալ դպրոցը, չեբր մարդիկ լեռներում, անտառներում թագ ելին կենում, իրենց կյանքն ապահովելու: — Վոչ:

— Իսկ դու, Յերեմիան, ասա, կարող ելին մարդիկ առանց գիտութիան, առանց դպրոցական և գրական կրթութիան, հնարել տրհետական պարարտացում, այնպիսին, ինչպիսին հնարեց գերմանացի գիտնական Լիրիխը: Կարող ելին արդյոք, անկիրթ մարդիկ ձեռք վերցնել փաշտե գութանից ու տափանից և գործածել չերկաթե արոր ու տափան, կարող ելին կտտարելագործել ցանքսի չեղանակները, վորով թե շատ և թե լավ հունձ ելին ստանում:

— Դու, Բագրատունի, մասձիր այ ինչի մասին. Այժմ մեզ մոտ, Հայաստանում, աշակերտները սովորում են քաղ սքներում և գլուղերում. ասա՛ կարող ելին այնքան չերեխաներ սովորել, չեթե վոր տղված գրքեր չլինեյին: Յեվ չե՞ վոր գրքերը տպվում են ապարաններում, չերկաթե և պողպատե մամուլներում, տպվում են թղթի վրա, վոր պատրաստվում և նույնպես մեծ, պողպատե մեքենաներով գործարաններում:

— Սրանից հետևում ե, չերեխաներ, վոր մեր կյանքում, ինչպես և մեր նախնիքների կյանքում, մինը շղթայվում ե մյուսին, մինը կապվում ե մյուսի հետ: Այսպես ել առաջին ժողովուրդների կյանքի մեջ կար ալդպիսի կապ: Որինակ՝ հնումը մարդիկ չունեյին հաղորդակցութիան ճանապարհներ և չերկաթուղիներ,

խճշուղիներ և ալագասահ շոգենավեր, մինչև
անգամ միևնույն չերկրի բնակիչները շատ հազիվ
եյին պատահում միմյանց և իրար շատ քիչ
եյին ճանաչում. միայն ծայրահեղ կարիքի ժա-
մանակ մարդը դուրս եր գալիս իր շրջանից:
Բայց չերեացին ճանապարհներ և շոգենավեր—
և մարդիկ շարունակ ճանապարհորդում են աջ
ու ձախ վոչ միայն իրենց չերկրում, այլև հե-
ռավոր չերկրներում, ծախում են արտասահ-
մանում հաց և զանազան ապրանքներ և իրենց
համար արտասահմանյան ապրանքներ գնում:
Մի վորևե չերկրի տնտեսությունը, բարորու-
թյունը և մասնավորապես պարենը կախված ե
ուրիշ չերկրների տնտեսությունից և բարորու-
թյունից: Մինչև 1914 թվի պատերազմը Ան-
գլիայի բնակիչների համարյա մի հինգերորդը
սնվում եր Ռուսաստանի ցորենով: Իսկ վերջինս
ստանում եր Անգլիայից զանազան մեքենաներ
և գործիքներ, վորոնք չեյին կարողանում պատ-
րաստել ռուսական գործարաններում: Ճիշտ այն-
պես ել մյուս չերկրների հետ տեղի չեր ունե-
նում մշտական հարաբերությունների և ապ-
րանքների կանոնավոր փոխանակում: Յերբ պա-
տերազմի հետևանքով այս հարաբերություններն
ու ապրանքափոխությունն ընդհատվեցին, այն
ժամանակ քայքայվեց Ռուսաստանի տնտեսու-

թշուհն, արտասահմանումն ել զնասներ կրեցին
Ռուսաստանի հետ հաղորդակցութիւնը կարե-
լուց: Վերականգնել ժողովրդական տնտեսու-
թիւնը, քայքայման առաջն առնել կարելի չե
միայն այն ժամանակ, չերբ հաջողվի նորից վե-
րականգնել կանոնավոր հարաբերութիւնն հա-
րեան ժողովուրդներին հետ:

— Լավ ըմբռնեցեք, չերեխաներ, ինչ վոր այ-
սոր անցանք: Մարդկանց կյանքում ամեն ինչ
կապված է մինը մյուսին հետ: Վորպեսզի հաս-
կանանք այս կապը, հարկավոր է գիտութիւն:
Իսկ վորպեսզի կյանքն ընթանա կանոնավոր և
հատատուն, հարկավոր է ընդհանուր աշխա-
տանք, հարկավոր է հասարակական կանոնավոր
կազմակերպութիւն:

Այս խոսքերով ուսուցիչը գուրս չեկավ դա-
սարանից:

Զուրյց չեվ ԵԱՐԱԳՐՈՒՅԱՆ ԿԱՄԱՐ.— Ի՞նչ ա-
ռնչութիւն կա չերկրի մշակութիւն և չերկաթի
շահագործման մեջ: Ի՞նչ առնչութիւն կա քա-
րածիսի շահագործման և կատարելագործված գոր-
ծիքների և մեքենաների գլուզում տարածվելու
մեջ: Վորեւ կապ կա՞ քաղաքակրթութիւն և մարդ-
կանց պարագմունքի մեջ: Ուսումը նպաստում է
մարդկանց չերկրագործութիւնը բարելավելուն:
Հնումը հնավավո՞ր եր արդյոք ուսում ասլ բոլոր
տեղերի չերեխաներին: Ի՞նչո՞ւ:

2. ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՅԵՎ ԱԶԱՏ ԱՇԽԱՏԱՆՔ.

(Մերուևու պատմածը)

— Շատ հին ժամանակ, — սկսեց իր պատմութիւնը ծերունին, չերբ դեռ չես փոքր ելի, մեր նահանգական քաղաքում ապրում եր մի հարուստ, խելառ ազնւական: Նա շատ ճորտեր և հարկադրված (оброчных) արհեստավորներ ուներ քաղաքում: Այդ ազնւականն ամեն տեղ հպարտանում եր իր արհեստավորներով: Մի անգամ մի անգլիացի չեկավ այդ քաղաքը: Մեր ազնւականը հենց վոր պատահեց նրան, չգիտեմ ինչու, մեկեն սկսեց վիճել նրա հետ: Ազնւականն իր արհեստավորներին և ուսս ժողովրդին եր գովում, անգլիացին՝ իր ժողովուրդն եր բարձր դասում. այսպիսով կացինը քարին դիպավ:

— Ինչ համեմատութիւնն ձեր և մեր մեջ, — ասում եր ազնւականը. — ձեր ժողովուրդն ազատ ե, չերես առած: Յերբ պետք լինի մի բան շինել, պետք ե չերկար շոյել վարպետաների գլուխը, վոր անեն: Ափսոս չեն մերոնք:

— Իսկ ձերոնք ինչպես են, — հարցրեց անգլիացին:

— Ինչ վոր հրամայես, իսկույն կկատարեն:

Պարբերներ իմ ճորտն ե, ատաղձագործը, դերձակը, կոշկակարը, բոլորն իմ ճորտերն են: Ինչ վոր ուզեմ—կասեմ մի խոսք—և ամեն ինչ պատրաստ կլինի:

— Մի՞թե, — վրա բերեց անգլիացին:

Վիճեցին—վիճեցին և վերջը զբաղ չեկան 10 հազար ուրլով, թե վոր քաղաքում ում վարպետներն ավելի շուտ կկատարեն պատվերը: Իսկ պատվերի նկարը պետք է պատրաստեր ազնվականի վարպետների համար անգլիացին, իսկ անգլիացիների համար՝ ազնվականը: Չեոք-ձեոքի խփեցին ազնվականն ու անգլիացին և դիմեցին գործի:

Բայց դու տես, վոր մի խորամանկութուն չանես. դուք խորամանկ ժողովուրդ եք, — նախազգուշացրեց անգլիացուն ազնվականը:

Անգլիացին նստավ սեղանի առաջ, վերցրեց մի կտոր թուղթ և սկսեց նկարել: Նկարեց մի փոքրիկ սալակ, լծասարքը և ասաց ազնվակա-նին:

— Ահա առ. թող քո գոված վարպետները պատրաստեն՝ ինչ վոր այստեղ նկարված է:

Ազնվականը նայեց նկարին, տեսավ, վոր բոլորը շատ պարզ բաներ են, ուրեմն հաղթութունն ապահովված է, ուստի և ուբախ բացա-կանչեց.

— Միտկա:

Իսկուզն նրա կանչին վազեց մի կազակ տղամտ
— Վազիր, Միտկա,— հրամայեց նրան ազ-
նովականը, կառապործ մակարի, դարբին Իգնա-
տի, թամբագործ Դավթի և ասաղձագործ Գրի-
գորի մոտ և բոլորին կանչել: Տես, անզգամ,
չուչանաս, իսկուզն վազիր:

Միտկան վազեց, իսկ ազնովականը մի ուրիշ
տղայի չեւ կանչեց և պատվիրեց նրան գնալ
Միտկայի չեռեից և տեսնել, թե արանգ գնաց:
Այսպես եր մեր ժամանակը. մեր տերերը շելին
հավատում, թե մենք նրանց համար ամբողջ հո-
գով ելինք աշխատում: Յեւ ճիշտ ել մտածու-
ելին:

Միտկան շտապով դուրս վազեց արրոջ աղա-
բանքից, հասավ փողոցի անկյունը և քայլերը
փոքրացրեց, սկսեց կամաց գնալ: Գնում ե տղան
հանդարտությամբ ու մտածում, թե առաջ ում
մոտ գնա. կառագործ Մակարի, թե՞ դարբին
Իգնատի, թե՞ թամբագործ Դավթի: Մտածեց,
մտածեց և վորոշեց առաջ գնալ դարբնի մոտ, - նա
գետի ափին եր ապրում, աչնտեղ, ճանապարհին,
կարելի չե և լողանալ, տերը վոչինչ, կսպասե:
Միտկան հազիվ հասավ քաղաքի հրապարակին,
տեսավ ճահճի մոտ, մարգագետնում չերեխանե-
րը վեգ են խաղում: Իսկ մյուսներն, ավելի
փոքրերը, վեր քշած անդրավարտիկներով, ճա-

հիճն են չափում: Փոքրիկ կազակը մտանցավ նրանց և բոլորովին մոռացավ գործը:

— Տուր մի անգամ ել չես խփեմ, խնդրեց Միտկան մի չերեխալի:

Բայց նրան չհաջողվեց խփել: Այս միջոցին մոտ վազեց մյուս փոքրիկ կազակ վերահսկիչը և բղավեց.

— Միտկա, տես, կասեմ պարոնին, վազիր շուտով:

Միտկան դիտարկը քաշեց գլուխը և զնաց: Գնում է փողոցով և մտածում է թե ինչ խաղ խաղա: Նա շատ ուրախ է, վոր տիրոջ ապարանքից գոնե մի ժամով դուրս է պրծել և նրա ծեծ ու կանչից կարող է հանդստանալ: Իսկ փողոցում գործեր քիչ չսլատահեցին: Քաղաքները, մեր ժամանակ, քնած էին՝ փողոցներում խոզեր, գոճիներ, հավեր ճեմում էին, չերեխաներն էլ սրանց մոտ շարություն էին անում: Յեվ Միտկան էլ մեկ այս, մեկ այն չերեխաներին և միանում: Մի տեղ խոզի մեջքին մի փոքրիկ չերեխա էին նստացրել, մի ուրիշ տեղում քնած քաղաքապահի չետից փայտաթելի (почальный) պոչ էին կապել, քթի մեջ կենդանի ճանճ էին դրել: Այսպես շարաճճիություններ անելով՝ մի ժամից Միտկան հասավ Մակարի տունը և հայտնեց նրան տիրոջ հրամանը:

Հետո Միտկան լողացավ և գնաց թամբագործի մոտ, թամբագործից կառագործի մոտ: Այսպես անցավ ընդհանուր մոտ և վերագարձավ զեկուցելու տիրոջը:

Այդ ինչի՞ ազգքան ուշացար, անզգամ, — հարցրեց տերը:

Յես վազեվազ գնացի ամեն տեղ և տես՝ ինչպես եմ քրտնել, — առանց կարմրելու սուտ խոսեց Միտկան և ցույց տվեց լողանալուց թըրջված մազերը:

— Տեսնո՞ւմ եք՝ ինչպես են մեր մարդիկը, — ասաց ազնվականն անզլիացուն, ցույց տալով Միտկային:

Սպասում ե, սպասում տերը վարպետներին, իսկ նրանք չկան ու չկան: Նրանք ել չե՞լին շտապում: Բոլորն ել գիտելին. վոր տիրոջ տ սի՞ք աշխատանքներն իրենցից չեն փախչի: Սպասեց, սպասեց տերը և արդեն կամենում եր մի ուրիշ կազակի ուղարկել, չերը տեսավ, վոր վարպետները մինը մյուսի չետեից սկսեցին դալ:

Տերը նրանց ավեց նկարը, պատմեց, բացատրեց ամեն ինչ և ասաց.

— Ե՛, ինչ, կկարողանա՞ք շինել:

— Կաշխատենք, տեր, — ասացին միաձայն վարպետները:

Դե գնացեք, աստված ձեզ հետ, ասաց տե-

բը: Յեվ հենց վոր նրանք դուրս չելան, տերը
նրանց չետևից վազեց. կարծես թե մի բան մո-
ռացել եր ասելու: Հասավ նրանց նրբանցքի
դռան մոտ և շշնջով ասաց. — Տեսեք, խարդախ-
ներ, շուտ շինեք, թե չե՛ հոգիներդ կհանեմ:
Իսկ դու, Մակարկա, տես, չխմես, թե չե բոլոր
մազերդ իմ ձեռքով կփետեմ:

Ազնվականը ճանապարհ գցեց վարպետներին
և սկսեց անհամբեր սպասել, թե չերբ կպատ-
րաստեն: Իսկ վարպետները Միտկալի պես շատ
սառն ձեռնարկեցին գործին: Խանգարիչ միջոց-
ներ ել չպակասեցին. մեկ հարմար չերկաթն եր
պակասում, մեկ փայտը պատրաստ չեր լինում:
Վարպետներն այս ու այն կողմ ընկած, գլխները
պատռեցին, վերջապես չերեք որից հետո շինե-
ցին վերջացրին, բերին տիրոջ դռանը կանգնե-
ցրին:

Անգլիացին նայեց գործին, գլուխը շարժեց և
ասաց.

— Նկարին փոքր ինչ նման չե, գործն ել մա-
քուր չե կատարված. բայց վոչինչ. Այժմ գնանք
մեր չերկիրը, իմ վարպետների մոտ:

Պատրաստվեց ազնվականը և գնաց ոտար չեր-
կիր: Շատ գնացին, քիչ գնացին, վերջապես հա-
սան մի անգլիական քաղաք, իջան շոգենավից և
գնացին հյուրանոց: Անցնում ե ազնվականն ոտար

քաղաքով, նայում ե շուրջը և արմանում, զարմանում: Աղմուկն անգլիական քաղաքի փողոցներում վոչ տեսնված և վոչ լսված ե, ճիշտ մեր տոնավաճառների ժամանակ տիրող ժխորի պես: Փողոցները սալած են, կարծես թե քարե հատակ լինեն, իսկ սրանց վրա կառքեր, ձիավորներ, հեռակալներ շարունակ վազվզում են, կարծես թե բոլորն ել շտապում են մի նոր հրաշք տեսնելու: Ազնվականը զարմացավ, թե ինչպես ե, վոր վոչ վոր ձիու տակ չի ընկնում, և ասում ե.

— Ի՞նչ ս ը են շտապում սրանք, բարեկամ:

— Իրենց գործին: Ամեն մարդ իր գործն ունի, սրա համար ել շտապում ե, — պատասխանեց անգլիացին:

Հազիվ անցել ելին քաղաքի աղմկալի մասը, մի նոր բան տեսավ ազնվականը: Փողոցներն այլևս այնքան մարդաշատ չելին, բայց սրանց կողքերին բարձրանում ելին վոչ թե տներ և խանութներ, այլ գործարաններ: Ծխնելուչներ, ծխնելուչներ, կարծես մոմեր, ցցված են փողոցի չերկու կողմում և ծխում են սե ծխով: Ծխից մինչև անգամ սև ամպեր են կուտակվել քաղաքի վրա: Ազնվականը նայեց, նայեց և չհամբերելով հարցրեց.

— Ի՞նչպես ե, վոր այստեղ ծխից մարդիկ չեն

խեղդվում: Ափսոս չեն մեր քաղաքները. փողոցներում մարգագետիններ են կանաչում, ողբ մաքրւր. նեղվածք և այսպիսի խառնակութուն չկա...

— Ձեզանում վոչինչ չեն անում, իսկ մեզանում աշխատում են, այս պատճառով ել ծուխ և խառնակութուն ե տիրում,— պատասխանեց անգլիացին:

Նրանք հասան մի հյուրանոցի և տեղավորվեցին մի սենյակի մեջ: Աղնվականն իր իրերը վայր եր դրել. անգլիացին նրան ասում ե.

— Դեհ, չպետք ե ուշացնել, ինչ պատվեր վոր տալու չես, շո՛ւտ արա, տո՛ւր նկարը, ժամանակը թանգ ե:

Աղնվականը նստավ սեղանի առաջ, վերցրեց մի կտոր թուղթ և նկարեց մի կառք՝ բարձր, անճոռնի անիվներով, ուսսական մուշտակ, թաղիքի վռտնամաններ և դիւարի՝ ունկապանակով: Անգլիացին նայեց նկարին և անմիջապես սկսեց վազել: Հյուրանոցի բոլոր ծառայողներին զրգզրզում ե, փնթփնթում ե, դուրս տալիս իրենց լեզվով, փողը աջ ու ձախ շարտում և բոլորին մի ինչ, վոր տեղ ուղարկում: Միքիչ հետո սկսեցին մարդիկ գալ, մինը մյուսի չետևից. դալիս են, խոսում և անմիջապես փախչում: Նայեց, լսեց աղնվականը և սկսեց տեղավորվել ինչպես հարմար ե, իրեն ~~տան պետ~~

15939

0667 A



— Յերեք չորս որ այստեղ կապրենք, — մտածեց ազնվականը՝ շոկելով և տեղավորելով իր իրերը:

Սակայն ազնվականին չհաջողվեց չերկար ապրել ոտար քաղաքում: Նրանք չեկան առավոտյան, իսկ ճաշից հետո անգլիացիին առում ենրան.

— Դե՛հ չեկ, ստացիր պատվերդ:

Ազնվականը զարմանքից բացեց բերանը և վնաս անգլիացու չետեից: Նրանք փողոց չեյան և տեսան, վոր այդտեղ արդեն կանգնած ե մի նոր կոթք, բարձր, անճոռնի անիվներով, իսկ կոթքի վրա դրած են թաղիքի վոտնամաններ, մուշտակ և գլխարկ: Ազնվականի ամբողջ պատվերը լիովին պատրաստ եր:

Հառաչեց ազնվականը, հանեց 10 հազար ուրբի, տվեց անգլիացուն, իսկ անգլիացին ասաց.

— Ե, ի՞նչ, տեր, ել միճեւ չե՞ս ուզի:

— Վ՛հ, բավական ե, բավա՛լան, — բարկացած ասաց ազնվականը:

— Ի՞նչի չես, տեր, բարկանում, մե՛ծը չես չսկսեցի: Յես քեզ հենց առաջին անգամ պատահելիս ասացի, վոր ձեր վարպետները մերինների համեմատությամբ վոչինչ չարժեն. ձեր չերկրագործներն ել, թեև ամբողջ որն արչուն քրտինք են թափում, բայց չերկրից այն չեն

ստանում, ինչ վոր անգլիացին թեթև աշխատանքով ստանում է: Յեւ ձեր ճորատացած ամբողջ ժողովուրդը...

— Ասա ինձ, բարեկամ — ընդհատեց նրան ազնվականը, — ինչպես չես իմ ճորտերին և հարկադրված վարպետներին արագաշարժության և արհեստների վարժեցնում:

— Թող նրանք դադարեն ճորտ և հարկադրված վարպետներ լինելուց, թող իրենք իրենց վաժեցնեն և կտեսնեք, վոր վարպետը կդառնա հմուտ վարպետ և չերկրագործը սովորեն չե, կրագործ:

Հայտնի չե, թե իսկապես վիճել և անմիտ ազնվականը տարորինակ անգլիացու հետ. կարող ե վիճած լինել, կարող ե և չլինել: Բայց մի անկասկածելի ճշմարտություն և թաղնված ծերունու այս պատմության մեջ: Ճորտությունը չերկու դարից ավելի ծանրանում եր ուս ժողովրդի վրա. ուս մարդկանց աշխատանքն ստիպողական, հարկադրական եր, գավազանի տակ: Այս պատճառով ել և՛ արհեստագործությունը, և՛ վաճառականությունը, և՛ չերկրագործությունը և՛ արվեստները — բոլորը Ռուսաստանում կանգնած ելին: Մեծ գործարաններ չեյին հիմնվում, նույնիսկ մեծ քաղաքները խուլ և քնած ելին: Իսկ Անգլիայում, ուր ժողովուրդն արդեն վաղուց

թոթափել եր ճորտական լուծը, քաղաքներն աղ-
մկալից ելին, մարդաշատ: Յերկրի մեջ ծաղկում
եր գործարանային արդյունաբերությունը, և ան-
զլիական ազգն առաջինն եր աշխարհում իր բա-
րորությամբ և նախաձեռնությամբ:

Գիտությունը և ազատությունն անմատչելի
եղին ուսս չերկրագործին, և այս պատճառով ել
շատ թույլ եր զարգացած չերկրագործությունը:
Նա չետ եր Ֆացել ժողովրդի աճման աստիճա-
նից. ժողովուրդն ավելանալով ավելանում եր,
իսկ չերկրագործությունը, գործիքները, բերքը
ֆուսս ելին առաջվանը: Ռուս չերկրագործի աշ-
խատունակությունը շատ ցածր եր: Ռուս տգետ
ճորտ գյուղացիները չեղին կարողանում հանել
չերկրից այն, ինչ վոր կարող եր տալ զխակ,
աշխատասեր և ազատ չերկրագործը:

XIX դարի կեսերին արդեն շատերին պարզ
եր ուսս ժողովրդի չեամմնացությունը: Նույն-
իսկ շատ կալվածատերեր, այսինքն գյուղացիներ-
րի տերեր, չեկել ելին այն չեզրակացության, վոր
հենց իրենց ել ձեռնառու չե ճորտատիրական
իրավունքը, վոր ավելի ձեռնառու չե գյուղացի-
ներին ազատ արձակել և հետո նրանց բանվոր
վերցնել վճարով և այս վճարի փոխարեն պա-
հանջել նրանցից իսկապես փութաջան, լավ և
արդյունավետ աշխատանք:

1861 թվին կալվածատիրական ճորտերն ազատվեցին ճորտատիրական կախումից:

Այս բարենորոգմամբ Ռուսաստանը բավական առաջադիմեց անտեսապես: Ճիշտ է, ճորտերի ազատագրումը լիովին չկատարվեց, ճիշտ է, սակավահողութչուհն, անորինութչուհը, ծանր հարկերը և տգիտութչուհը թույլ չտվին նրանց ոգտավելու նոր պայմաններից, ոգուտ ելին ստանում գլխավորապես վոչ գյուղացիներ, չերկրագործներ: Բայց և այնպես՝ չերկիրը արհեստագործութչան և վաճառականութչան համր դարգացումից անցավ արագ դարգացման: Նա ծածկվեց չերկաթուղիների ցանցերով, վորոնցով տարվում ելին հացահատիկներ և վաճավում արտասահմանում, վորոնցով Գոնեցչան ավագանից քարածուխը փոխադրվում եր ամեն կողմ, վորոնցով հարավից և Ուրալից տարվում ելին չուգուն և չերկաթ և այլ չատ նչութեր: Գետերի վրա դարգացավ նավագնացութչուհը: Յերկրի մեջ հիմնովեցին և սկսեցին գործել բագմաթիւ գործարաններ: Սրանցից միքանխում՝ պատրաստվում ելին գյուղատնտեսական գո, ծիքներ, մչուսներում մանած թել և մանուֆակտուրա, չերրորգներում՝ կաշվեղեն և այլն: Մի քանի գյուղեր և փոքրիկ քագաքներ դարձան արհեստագործական մեծ կենտրոններ, չեռուն կչանքով,

հազարավոր բանվորներով և հարուստ վաճառականութեամբ:

Գյուղերում չերեացին բարեկարգ անտեսություններ՝ կատարելագործված չերկրագործական գործիքներով, խոտացանութեամբ, բազմացան չեղանակով և կենդանաբուծութեամբ: Հիմնվեցին եղջերավոր տոհմիկ կենդանիների բուծարաններ, զարգացավ վոչխարապահությունը: Մի խոսքով՝ ժողովրդական անտեսութեան շատ կողմեր և մասնավորապես չերկրագործությունը մեծ առաջադիմություն գործեցին:

Վոչ-գյուղացիները, գլխավորապես, ոգավեցին այս բարենորոգման շրջանի, այսինքն 1861 թվի ճորտերի ազատագրումին հաջորդող ժամանակամիջոցի բարիքներից. բայց չեթե այս բարենորոգումը չլիներ, չեր լինի նաև չերկրի մերցույց տված անտեսական զարգացումը: Այսպես սերտ կապված են բոլորը:

3. ՀՈՂՆ ՈՒ ՄԱՐԴԻԿ ԽՍՀՄ ՄԵՋ.

Գաւեսերը. — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բռնում է հողի ահագին տարածություն: Բնակիչների գլխավոր պարապմունքը չերկրագործությունն է: Սակայն մշակվում է հողի աննշան մասը:

ԽՍՀՄ մեջ ամբողջ հողի 26⁰/₀-ը վարելահող է, 10⁰/₀-ը մարգագետին և արոտատեղի, 39⁰/₀-ը անտառ, 19⁰/₀-ը անպետք հողեր:

Այսպես չէ մյուս պետութիւններ, ի մեջ: Որինակ՝ Գերմանիայում մշակվում է ամբողջ հողի կեսը, իսկ Ֆրանսիայում՝ ավելի ևս: Ռուսաստանում գրեթե ամեն տեղ տարվում է չեռագաշտյան տնտեսութիւն: Հարևան չերկրներում վաղուց արդեն անցել են բազմադաշտյան: Իսկ դուք գիտեք, վոր բազմացանի ժամանակ վարելահողի ամենամանջան մասն է հանգիստ առնում:

Վերջրած հավասար հողամասերից հանգիստ են առնում— Գերմանիայում հողի 6⁰/₀-ը, Ֆրանսիայում՝ 13⁰/₀-ը, Ռուսաստանում՝ 34⁰/₀-ը:

Ինչ են ասում այս թվերը: Նրանք ասում են, վոր վարելահողի չուրաքանչյուր 100 դեսյատինից Գերմանիայում հանգստանում է միայն 6 դեսյատին, իսկ ԽՍՀՄ մեջ՝ 34 դեսյատին: Հասկանալի չէ, վոր հացահատիկներ ել Գերմանիայում միաշափ հողամասերից հավաքում են ավելի, քան Ռուսաստանում:

Ի՞նչ հացահատիկներ են ցանում ԽՍՀՄ մեջ:

Առաջին տեղը բռնում է հաճարը, չերկրորդ տեղը՝ ցորենը: Հետո գալիս են վարսակը, գարին և մյուս հացահատիկները (կորեկ, հնդկացորեն (гречиха), սիսեռ, սիմինդր, կարտոֆիլ և այլն):

ԽՍՀՄ մեջ ցանած հողի 32⁰/₀-ը հաճար է, 25⁰/₀-ը ցորեն, 10⁰/₀-ը դարբի, 19⁰/₀-ը վարսակ և 14⁰/₀ ը այլ հացահատիկներ:

ԽՍՀՄ յեւլ ՀՍԽՆ բնակչութիւնը. - Վոչ միայն տարածութեամբ, այլ և բնակիչներէ թվով մեծ է ԽՍՀՄ, և չեւրոպական պետութիւնն էր մեջ առաջին տեղն է բռնում: XX դարի սկզբում ԽՍՀՄ մեջ մոտ հարյուր չերեսուն միլիոն մարդ էր ապրում, այսինքն չերկու անգամ ավելի, քան Գերմանիայում: Իսկ չերեք հարյուր հիսուն տարի առաջ, XVI դարի վերջին՝ Մոսկովյան թագավորութեան մեջ ընդամենը չորս միլիոն բնակչութիւն կար: Յերեք ու կես դարում նա ավելացել է քառասուն անգամ: 1550 թ. չեղել է 4 միլ., 1700 թ.՝ 12 միլ., 1800 թ.՝ 35 միլ., 1850 թ.՝ 69 միլ. և 1900 թ.՝ 130 միլիոն:

XVIII դարից սկսած բնակչութեան աճումն արագութեամբ մեծացել և հասել է գագաթնակետին XIX դարի վերջին: Վերջին 50 տարեկան ընթացքում բնակչութիւնը համարյա թէ կրկնապատկվել է: Սրա գլխավոր պատճառն այն է, վոր նախկին դարերի չերկարատե պատերազմներն ու սրանց հետ կապված համաճարակները տեղի չեն տվել խաղաղ կյանքի, և Ռուսաստանին միացել են շատ չերկրներ իրենց բնակիչներով:

Հայերիս ամբողջ թիվն այժմ մոտավորապես կարող ե հասնել 1,100,000-ի: Խորհրդ. Հայաստանում 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալներով՝ չհաշված գորքը, 781,011 բնակիչ կա, վորից 395 538 ար , 385,173 իգական:

Այս թվից 636,288 (324,885 ար., 312,333 իգ.) ապրում են գյուղերում, 143.823 (70,683 ար , 73,140 իգ.) քաղաքներում: Այսինքն ամբողջ ազգաբնակչության 19 տոկոսն ապրում ե քաղաքներում, իսկ չեթե վերցնենք ԽՍՀՄ, այն ժամանակ կտեսնենք, վոր քաղաքային թղնակչութունը կազմում ե 14⁰/₁₀ ը: Սրա գլխավոր պատճառն այն ե, վոր միջանի զավառամասերի կենտրոնական գյուղերն, ինչպես՝ Ղարաքիլիսա, Իջևան, Ստեփանավան, Դիլիջան, խորհրդային իշխանության տնորինությամբ քաղաք համարվեցին:

4. ԲՐԻԴԻՆՈՅԱՆ ԿՈՄՈՒՆԱ.

Հին, կիսավեր, միհայ կանի փայտե տուն, նույնպիսի չերկու խրճիթ, չերեք վոչ մեծ, հին շտեմարաններ, նույնքան ել սարայներ, բոլորովին անպետք ախոռներ և գոմեր (առանց անասունների, վոչխարների և ձիերի), ահա թե ինչ եր ներկայացնում վեց տարի առաջ Պակովի նահան-

գի Տորոպեցի դավառի խուլ անկյունում ընկած Բրիդինո գյուղի մտաի կալվածքը: Միանգամայն աչքաթող արված և ավերված եր այս կալվածքը: Այս միևնույն դրուժյան մեջ եր գտնվում նրա շուրջը տարածվող 150 դեպատին վարելահողը:

Այս կալվածքը բավականաչափ փշտցիլ և խոպանացել եր դեռ պատերազմից առաջ, և պատերազմի ու հեղափոխության տարիները նրան կատարելապես ամայացրին: Պետք եր մեծ աշխատանք և ջանք գործ դնել, վոր կարելի լիներ նրան վերականգնել: Այս պատճառով ել, չերկար ժամանակ մնացել եր ավեր: Յերկար ժամանակ չեր գտնվում մինը, վոր ձեռնարկեր նրա վերականգնման ծանր աշխատանքին: Սակայն վերջիվերջո այգպիսիները գտնվեցան: 1918 թվի մայիսի 1-ին կազմակերպվեց Բրիդինոյան կոմունան, վորը տնտեսութուն հիմնեց այդ ավեր տեղում:

Ո՞վքեր ելին այդ կոմունարները. — տեղական աղքատ գյուղացիները: Գործին սկիզբ դրին Գրոմով չերեք ու Պետրով չերկու չեղբայրները:

Նրանք շատ վատ ելին ապրում, ինչպես բրիդինոցիներից շատերը: Այստեղի հողը անբերրի չեր, ճահճալին, առանց աղբով պարարտացնելու բերք չեր ստացվում, իսկ պարարտացնելու հա-

մար հարկավոր եր բավականաչափ տավար ու-
նենալ, բայց այդ շատ սակավ եր, մանավանդ
սլատերազմից հետո: Պատերազմը սաստիկ վա-
տացրել եր առանց այն ել գյուղական թույլ տըն-
տեսութիւնը, բայց դրա փոխարեն բերել եր
հեղափոխութիւն, իսկ հեղափոխութիւնը կյան-
քի մեջ մտցրեց շատ նոր բաներ, վորոնց մա-
սին առաջ նուէնիսկ մտածել չելին համարձակ-
վում: Այս նորութիւնները հասան մինչև խուլ
Բրիգիոնոն և պինդ նստան Գրոմով և Պետրով
յեղբայրների գլխներում: Նրանք խորհրդակցե-
ցին միասին, զնացին իրենց դավաործ կոմի մոտ,
իմացան թե ինչ կարելի չե անել և ինչպես, և
սկսեցին հավաքել համագյուղացիներին՝ վորպես-
զի կազմակերպեն կոլեկտիվ (ընդհանուր) տըն-
տեսութիւն, կամ այլապես՝ կոմունա: Համա-
գյուղացիներն անվստահութիւն մը վերաբերվե-
ցան դեպի այս գործը և միայն միջանիսը միա-
ցան Գրոմովներին ու Պետրովներին: 1918 թվի
մալիսի 1-ին Բրիգիոնոյան համայնական տնտե-
սութիւնը ձևականապես կազմակերպվեց և ստա-
ցավ այն կալվածքը, վոր վերևը հիշեցինք:

Կոմունարները հավաքեցին իրենց բոլոր ու-
նեցած, շունեցածը և դիմեցին աշխատանքի:
Ուժասպառ դաշտերում չերևացին գյուղական
նիհար, թույլ ձիեր, վորոնք արորով ակոսներ

ելին փորում, իսկ ակոսներում ցանում ելին
 կիսաքաղց հողագործները: Նրանք նորոգում ելին
 կիսավեր շենքերը, փորպեսպի հարմարեցնեն տա-
 վարի և մարդկանց բնակության համար: Դժվար
 էր, բայց գործի նորությունը վողևորում էր ըն-
 կերներին և վերջնական հաջողության հույսը
 հարատևում էր նրանց չեռանդը: Այսպես նրանք
 համերաշխ աշխատում ելին, առանց ձեռները
 ծալելու, առանց կուշտ ուտելու կամ խորը քնե-
 լու: Ընդհանուր աշխատանքով ձեռք բերվածը
 կազմում էր ընդհանուրի սեպհականութուն և
 գործադրվում բոլոր մասնակիցների և նրանց ըն-
 տանիքների կարիքների վրա: Ի՞նչ ու քո չկար
 նրանց մեջ:

Անցան միբանի ամիսներ անխոնջ աշխատանքով
 և մի անսպասելի շարիք ընկավ համայնա-
 կան տնտեսության վրա. միակ բնակելի տունը
 հիմնովին վառվեց: Հրդեհի միջոցին վոչնչացավ
 գուլքի մի մասը: Տուրալ, քաղցը, նեղությունը
 ուժգին խփվեցին կոմունարների չերեսին, բայց
 չկարողացան նրանց ընկճել: Նրանք շարունակեցին
 կռվել: Այսպես անցան ամբողջ հինգ տա-
 րիներ և կալվածատիրոջ ավեր տունը հիմնովին
 փոխեց իր տեսքը: Կալվածքում կանգնել են չեր-
 կու նոր տուն. (28 × 8 արշին, 24 × 12 արշ.),
 փորոնց մեջ ապրում են 40 մարդ, փորոնցից 18

աշխատանքները, մյուսները չերեխաներ ու ծերեր: Շինված են տնտեսութեան միջանի նոր շենքեր - սարաջ՝ գործիքների համար, ախոռ և այլն, հիմնված են սոցիալական ու ջրադաշտ, վորոնք սկսել են գործել 1923 թ. ոգոստոսի մեկից, վերջանում են ընթերցարանի և դպրոցի շենքերն, սկսել են շորացնել ճահճալին տեղերը:

Մինչև համայնական տնտեսութեան կազմակերպումն այս կալվածատիրական տնտեսութեան մեջ այգեգործութուն գոյութուն չունեի. նոր տերերը 1921 թվին չերկու դեսյատին տարածութեան վրա այգի ձգեցին 270 ծառով (200 խնձորենի, 60 սալորենի և 10 տանձենի): Գաշտային աշխատանքները կատարվում են նոր չեղանակով: Առաջներն ամբողջ հողաբաժնի վրա ցանվում եր ընդամենը չերկու դեսյատին վարսակ, չերեք դեսյատին սովուչտ: Այժմ կիրառվում ե բազմադաշտան չեղանակը: Յանքսի ընդհանուր տարածութունն ե 9 դեսյատին հաճար, 6 դեսյատին վարսակ, 4 դեսյատին դարի, 5 դեսյատին սիսեռ, 1 դեսյատին վուշ, $1\frac{1}{2}$ դես. կարտոֆիլ և 22 դես. աովուչտի դաշտեր: Մնացած հողը բնված ե անտառով, արոտատեղիներով և ճահճներով: Յեվ մինչդեռ գյուղական տնտեսութուններում ստացվում ե դեսյատինին՝ հաճարից 28 փութ, վարսակից՝ 30—40 փութ,

գարուց՝ 35 40 փ., կարտոֆիլից՝ 350 փ., այս
 համայնական անտեսության մեջ ստացվում է
 հաճար մինչև 100 փ., վարսակ՝ 70 փ., գարի՝
 110 փ., կարտոֆիլ՝ 800 փ.: Աշխատանքի սկզբ-
 բում համայնական անտեսությունն ուներ 4 հոգ-
 նած ձի, 4 կով, 10 վոչխար և 3 խոզ, ինչպես
 և՛ գյուղատնտեսական գործիքներից 2 գութան,
 3 արոր, 3 տափան, նաև 2 սայլ, 4 քաշակ, 1
 սահնակ և այլն: Այժմ ունի 6 յավ բեռնակիր
 ձի, 12 կթվոզ կով և 26 հորթ: Համայնական
 անտեսությունն ունի 2 շոգեմեքենա, 5 կառք,
 3 խոտհար, 3 ձիաքարշ փոցխ, 11 գութան, արոր,
 տափան նոժանի, 2 բազմախոփանի արոր, 6
 սայլ, 2 սահնակ և 60 կտոր գյուղատնտեսական
 իրեր:

Ահա այս է մի խումբ մարդկանց հնգամյա հա-
 մառ աշխատանքի արդյունքը, վորոնք միացրել
 են իրենց ուժերն ընդհանուր գործի համար: Յեվ
 ամենայն արդարությամբ Բրիգինոյի համայնա-
 կան անտեսությունը համարվում է Պսկովի նա-
 հանդի միակ, որինակելի կոմունան:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Նոր-դաս.— Մասկվայի սպարանների ժողովա-
 րանի գահլիճը ժամանակավորապես դարձած էր

ժողովրդական դատարանի աշխատանքին վերաբերյալ նիստերի դահլիճ:

Քննվում եր քաղաքացի Պավլովի, կոշկակարանոցի աիրոջ գործը: Դատական սեղանի առջև նստած եր ժողովրդական դատավորը, և նրա կողքերին չերկու ժողովրդական ատենակալներ — գործարանի մի բանվոր և մի բանվորուհի: Մեղադրյալի նստարանի վրա՝ Պավլովը, վկաներն ելին՝ աշխատանքի տեսուչը, կաշեգործական պրոֆմիուժյան ներկայացուցիչը, Պավլովի արհեստանոցի տասը բանվորները, վորոնցից չերեքը 12 — 14 տարեկան տղաներ ելին: Ներկա ելին շատ մարդիկ, առավելապես չերկու սեռի բանվորներ:

Կարգում են ամբաստանադիրը, վոր զժում ե մի այսպիսի պատկեր: 1923 թ. դեկտեմբերի 15. «կաշեգործի շաբթին» Պավլովի կոշկակարանոցը չեկան դիտելու աշխատանքի տեսուչը և կոշկակարական պրոֆմիուժյան ներկայացուցիչը: Պավլովը հենց վոր բակում նկատեց նրանց՝ վազեց արհեստանոց և ինչ վոր բղավեց. իսկույն բանվորները փախան գոնազան կողմեր: Յեվ չերբ տեսուչը միուժյան ներկայացուցչի հետ մտան արհեստանոց, այստեղ գտան միայն չերկու չերեխա. վորոնք թագ ելին կենում ոռսական վառարանի չետեր:

«Յեւ արհեստանոց շունեմ, հայտնեց Պավլովը
և այս չերկու չերեխաներին իրենց ծնողներին
խնդրով սովորեցնում եմ արհեստ»:

Յեկողները հեռացան առանց վորևե մեղա-
դրանքի: Բայց մարտի 5-ին նորից չերեցան և
այս անգամ հաջողվեց տեսնել արհեստանոցն իր
ամբողջ կազմով.— 7 շափահաս բանվոր և 3
չերեխա նստած աշխատում էին:

«Մենք մեզ համար ենք աշխատում, մի տե-
սակ արտել ե», — հայտնեցին բանվորները տես-
չին, վոչ մի տեր շունենք:

Տեսուչը չհավատաց այս խոսքերին և սկսեց
քննել. չերեաց, վոր Պավլովը արհեստանոցի խս-
կական տերն էր, և բանվորների բացատրու-
թյունը հետևանք էր նրա պատվերի ու սպառ-
նայիքի: Բռնված Պավլովը հարց ու փորձի մի-
ջոցին սաստիկ բարկանում էր և բղավում տ' ս-
չի վրա. «'Ռուք միայն խանգարել զիտեք, պետք
ե ձեր վզից բռնել և դուրս շարտել»:

Տեսուչը հասկացավ, վոր Պավլովը մեղավոր
է, ուստի և սկսեց քննություն կատարել՝ պար-
զելու, թե ինչով էր Պավլովը մեղանչել աշխա-
տանքի վերաբերմամբ չեղած խորհրդային որեն-
քի դեմ: Ընդհանրապես քննություն կատարվում
ե կամ տուժողի գանգատով, կամ այն դեպքում,
չերք իշխանության ներկայացուցիչը — միլիցիան,

աշխատանքի տեսուչը, սանիտարական վերահսկիչը և ուրիշներն իրենք նկատում են որենքի խախտում: Յեթե քննությունը հաստատում և որենքի խախտումը, գործը գնում և ժողդատարան, չեթե վոչ՝ ընդհատվում և:

Քննության միջոցին Պավլովը շարունակում էր անորոշ ցուցումներ տալ և հարկադրում էր իր բանվորներին նույն կերպ վարվել, իսկ չեթե խաներին նույնիսկ թույլ չտվեց մտանալ աշխատանքի տեսչին:

Վերջապես Պավլովը ներկայացավ ժողդատարանին, մեղադրվելով, վոր խախտել և աշխատանքի վերաբերյալ որենքը, և արդյունաբերական ձեռնարկություններին մասին չեղած սանիտարական կանոնները, ինչպես նաև վիրավորել և աշխատանքի տեսչին:

Դատի միջոցին Պավլովը սկզբում աշխատեց ամեն կերպ արդարացնել իրեն և գործը խճճել: Դատավորը, վոր արդեն հասակն առած, ամրակազմ, պարզ հագնված, ըստ չերևույթին, բանվոր էր, լուրջ, մտախոհ դեմքով և թափանցող աչքերով, ուշադրությամբ լսում էր Պավլովի բացատրությունը: Յերբ նա վերջացրեց, դատավորն սկսեց հալցաքննել վկաններին

— Ասացեք, ընկեր, — դիմեց նա բանվորներից

մեկին, — քանի՞ ժամ եր տևում աշխատանքը Պավլոփի արհեստանոցում և վո՞րքան եր ձեզ վճարում:

— Մենք աշխատում ելինք առավոտյան ժամի 7-ից մինչև զիշերվա ժամի 11-ը, — սկսեց պատմել բանվորը, — վարձատրութլուն ստանում ելինք ամեն մի գույգ կոշկի համար 70 կոպ., միայն պարտավոր ելինք աշակերտների փոխարեն տիրոջ համար շարաթական չերեք գույգ կոշիկ պարտատել: Աշակերտներին նա վոչինչ չեր վճարում, միայն ճաշ եր տալիս և հասարակ հագուստ: Խորհրդալին տոներին ստիպում եր մեզ աշխատել, սպառնալով զրկել մեզ ճաշից և թեչից:

— Այսպես ուրեմն, գուք որական 14 ժամ ելիք աշխատում, — ասաց դատավորը: Դուք բոլորդ ել, ընկերներ, այդքան ելիք աշխատում, — հարցրեց նա մյուս վարպետներին:

— Բոլորս ել, — բացականչեցին բոլորը միասին, — վոչ մեկիս չերես չեր տալիս:

— Իսկ չերեխաների հետ ինչպես եր վարվում Պավլովը, — հարցրեց դատավորը բանվորներին:

— Այնպես եր վարվում, վոր ամենափոքր հանցանքի համար ծեծում եր: Նա շատ խիստ եր:

Ատենակալ-բանվորուհին, վոր վաղուց զթութլամբ նայում եր նիհար, կեղտոտ, պատառտված աշակերտներին, հարցրեց սրանցից ամենամեծին. —

Ապա պատմիր, թե ինչպես ելիք ապրում վարպետի մոտ:

— Վատ ելինք ապրում, — պատասխանեց նա, մի վտար մյուսից հետո բարձրացնելով և վոյորելով ձեռքի մեջ գլխարկը. — Նա մեզ ծեծում եր... սկզբում ինքն եր մեզ ծեծում, հետո սախլում եր տղաներից մեկին կաշե գոտիով խփել մյուսին. և չերբ խփում եր, վարպետը դիտում եր, և չեթե կամաց եր խփում՝ հրամայում եր նորից խփել: Մենք աշխատում ելինք վարպետանե-նի չափ: Աշխատում ելինք վոչ միայն կոշկակա-րության վրա, այլ և ջուր ելինք կրում, փայտ կոտորում, վառարանները վառում:

— Յերբ վարպետը մեզ վարձում եր, — ասաց մյուս տղան, — մեզ պատվիրեց, վոր չերբ տես-նենք, վոր թղթապանակով մինը զայիս ե, իս-կուչն թագ կենանք: Այդպիսի դեպքի համար մենք մինչև անգամ նշանի զանգ ունեյինք: Յերբ այդ զանգը հնչում եր՝ մենք ծակերն ելինք մըա-նում:

— Բայց չե՞ վոր ձեզ համար ավելի լավ կլի-ներ, — ասաց դատավորը, — վոր աշխատանքի տե-սուչը քննություն կատարեր և ձեզ պաշտպա-ներ:

— Վարպետը պահանջում եր, և մենք նրա-նից վախենալով, անում ելինք, ինչ վոր հրամա-յում եր, — պատասխանեցին տղաները:

Վկաների հետագա ցուցումներից չերևաց, վոր

արհեստանոցը, 9 քառակուսի սաժեն մեծության սենյակը, տարին միայն չերկու անգամ երկվացվում: Միշտ կեղտոտ եր, միշտ լի աղբի կույտերով: Յե՛վ այսպիսի մի տեղում ամբողջ որը աշխատում էլին վարպետներն ու աշակերտներն, այնտեղ ել ճաշում էլին, և գիշերում:

Մեղադրյալը մուսլ զեմքով լսում եր վարպետների և տղաների պատմածները. նրան այլևս դժվար եր ծածկել, ուրանալ. և նա հանձն առավ մեղադրանքը: Միայն տղաների ծեծելու մասին տված հարցին նա հարկավոր համարեց այսպիսի բացատրութուն տալ.

— Յես ինքս շատ քիչ անգամ էլի ծեծում տղաներին, — ասաց Պավլովը: — Մեծ մասամբ չես հրամայում էլի մեկին՝ թակել մյուսին:

Կարճառև խորհրդակցությունից հետո դատավորը կարգաց դատավճիռը. Պավլովին դատապարտել մի տարվա բանտարկության:

Աւստրալիա ուրենսգիրքը. Կոշկակարանոցի տեր Պավլովը մի տարվա բանտարկության դատապարտվեց աշխատանքի որենքը և արդյունաբերական ձեռնարկությունների սանիտարական կանոնները խախտելու պատճառով: Այդ ի՞նչ որենքներ են:

Մինչև հեղափոխությունը մեզանում պատահում եր, վոր գործարաններում և արհեստա-

նոցներում բանվորական որը տևում էր 10
չերբեմն՝ 12 և ավելի ժամ: Որենքը շատ թույլ
էր պահպանում բանվորական դասակարգի շա-
հերը: Աշխատավարձը, ինչպես նաև առողջապա-
հական պայմանները (աշխատավայրերի մաքրու-
թյունը, ընդարձակութունը և հարմարութուն-
ները), այս բոլորը կախված էին տիրոջ բարի
կամքից:

Որենքը շատ քիչ էր պաշտպանում բանվորի
շահերը:

Բոլորովին այլ կերպ դարձավ հեղափոխու-
թյունից հետո: Խորհրդային իշխանության հրա-
տարակած առաջին որենքներից մինը չեղավ
1917 թ. հոկտեմբերի 29-ի բանվորական 8-ժամ-
յա որվա վերաբերյալ որենքը: Հետագայում այս
որենքն ընդարձակվեց այս կամ այն մասերում, փո-
փոխվեց և վերջապես ստացավ վերջնական մի ձև,
աշխատանքի որենքգիրք խորագրով, վոր հաս-
տատվեց 1922 թվին: Միաժամանակ կազմակերպ-
վեց առանձին Աշխատանքի Ժողովրդական կո-
միտարիատ: Որենքի հիմնական պահանջն է. բան-
վորական որը չի կարող 8 ժամից ավելի տևել
որվա ընթացքում: Գիշերային աշխատանքներն
ավելի ծանր են քան ցերեկվանն, ուստի և գի-
շերային աշխատանքները տևելու չեն միայն 7
ժամ: Հետո անչափահասների (16 - 18 տարե-

կան), ստորջերկրյա բանվորների (ինչպես որինակ ածխահանքերում աշխատողները) և մտավորապես աշխատող մարդկանց համար հաստատված է 6 ժամյա բանվորական որ: Մինչև 16 տարեկան հասակն աշխատանքն ամբողջովին արգելված է: Առանձնապես կարճատև բանվորական որ սահմանված է քայքայիչ արդյունաբերության համար (7, 6, 4 և նույնիսկ 2 ժամ), միանգամայն պարտավորեցնելով, վոր այսպիսի աշխատանքների ժամանակ բանվորներին տրվի կաթ, կարագ, հատուկ հագուստ, դիմակ: Պարտադիր է ճաշի ժամանակ ընդմիջում անել, արտաժամյա աշխատանքները թույլ են տրվում միայն բացառիկ դեպքերում (հրդեհ, հեղեղ մեքենայի փրկացումն, վոր անհրաժեշտ է անմիջապես վերանորոգել, վորպեսզի աշխատանքը չերկար չդադարի): Այս պիսի բոլոր դեպքերում արտաժամյա աշխատանք թույլ է տրվում չուրաքանչյուր բանվորի համար տարեկան վոչ ավելի 120 ժամից և այն ել միայն աշխատանքի տեսչի թույլատվությամբ: Ամեն մի բանվոր, վոր ծառայել է $5\frac{1}{2}$ ամիս, պետք է արձակուրդ ստանա տարեկան առնվազն չերկու շաբաթ: Անչափահասները, վորոնք աշխատում են քայքայիչ ձեռնարկությունների մեջ, ստանում են չերկու շաբաթվա լրացուցիչ արձակուրդ: Ձեռնարկություննե-

բուժման աշխատանքը շատ անգամ վատ ազդեցութեամբ կարող է թողնուիլ բանվորներին առողջապահութեան վրա այն պատճառով, վոր աշխատատեղին (արհեստանոցը) վատ է շինված, կեղտոտ է պահվում և այլն. Աշխատանքի որենսդիրքը խիստ պատասխանատուութեամբ պահանջում է, վոր ամեն միջոց գործ դրվի աշխատատեղի անհարմարութեանները վերացնելու. պահանջում է նրանց կարգին պահել (առողջապահիկ դրութեանը):

Աշխատանքի որենսդիրքի գործադրութեան հրակոչութեանը դրված է աշխատանքի տեսուչների վրա, վորոնք բանվորական կազմակերպութեաններին ընտրված ներկայացուցիչներ են: Դրանց ոգնում են բժիշկները և ինժեներները (առողջապահական և տեխնիկական տեսուչներ):

Վերջապես աշխատավարձի վերաբերութեամբ որենսդիրքը սահմանում է մինիմում չափը: Այս մինիմումից ցած վարձողն իրավունք չունի վրճարել բանվորին: Բանվորին առանց լուրջ պատճառի չի կարելի հեռացնել:

Այդ պատճառները ճիշտ վորոշված են որենսդիրքում:

Ահա դրանք են գլխավոր առումները բովանդակութեանն աշխատանքի որենսդիրքի, վոր պաշտպանում է բանվոր մարդու աշխատանքը Խոր-

հրդային հանրապետութեան մեջ, և հենց այս որենքների խախտման համար եր, վոր կոշկա-կարանոցի տեր Պավլովը բանա նետովեց:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ.

Ծովածոցն ահագին, կլոր հայելու պես փայլում եր ամառային պայծառ արեի տակ: Նրան աջ և ձախ կողմերից անջրպետում ելին բաց ծովից կիսաշրջանով չերկու հրվանդաններ, մինը բավական բարձր, մյուսը հարթ: Այս չերկու հրվանդանների միջից ազատ չերևում եր անսահման ծովը, վոր հեռվում միանում եր հորիզոնի հետ: Ծոցի ափին և հեռու խորքում ցլված ելին տներ, մեծ մասամբ մի հարկանի. նրանց սպիտակ պատերը պարզ վորոշվում ելին ծառերի կանաչների միջից, իսկ ավելի հեռուն, խորքում, ցցվում ելին բավական բարձր լեռների ալիքավոր կատարները, վորոնք հյուսիսային կողմից բաժանում ելին նեղ ծովափը:

Այնտեղ, ուր վերջանում են տափաստանները և սկսվում լեռները, տարածվում ե մի թփուտ, լի դժնիկներով (держи дерево): Վորքան լեռը բարձրանում ե՝ այնքան թփուտը փոխվում ե մանր կաղնու անտառի, խառն հաճարենիներով: Անտառը ծածկում ե լեռների լանջերը մերթ կի-

սով չափ, մերթ ավելի ևս դատարկ թողնելով նրանց կատարները: Ամպամած որերին (ամառը շատ հազիվ ե պատահում) ամպերը խիտ պատում են լեռնաշղթան և շատ անգամ իջնում մինչև անտառի սահմանը: Դաշտի մարդկանց համար լեռների լանջերի վրայի ահեղ ամպերի տեսքը մի առանձին հետաքրքրական տեսարան ե կազմում: Աշնանը և ձմռանը ծովածոցին փոված փոքրիկ քաղաքը հանգիստ ե և սակավամարդ, մինչդեռ ամառվա սկզբից մինչև աշնան կեսը այդտեղ կյանքը չեռ ե գալիս: Բանը նրանումն ե, վոր այս քաղաքը կուրորտ ե, և այստեղ գալիս են հանրապետութունների Միության բոլոր կողմերից մարդիկ՝ հանգստանալու և առողջանալու: Հարավային տաք արևը և ծովային լողաբանները դեղերից ել լավ են վերականգնում մարդու ուժերը:

Առավոտյան ժամը 9-ն ե, արեգակն արդեն կիզում ե, սակայն նրա տաքութունը մեղմանում ե ծովի կողմից փչող թեթև, թարմ քամուց: Ծովափնյա փողոցի տներից մինի ցանկապատի միջից չերևում ե մի այլ տան առջև տարածված կրոկետի ավազապատ հրապարակը և մարմնամարզական վարժութունների զանազան պարագաներ՝ բարձր սյուն, սանդուխք և այլն:

Միքանի մարդիկ տարված խաղում են կրո-

կետ: Մինը անհաջողակ փորձում եր բարձրա-
նալ սյան վրա, բայց ամեն անգամ մի քիչ բար-
ձրանալուց հետո սահում եր ներքև, միքանի
մարդիկ ելնստած են ծառերի տակ դրված նըս-
տարսնների վրա. սրանցից միքանիսը կարդում
են, մյուսները դիտում կրոկետ խաղը:

Սյան վրա բարձրացողը վերջապես թողեց իր
փորձերը և սրբելով ճակատի քրտինքը մոտեցավ
կրոկետ խաղացողներին և ասաց. թողնենք, ըն-
կերներ, այդ խաղը, Կնանք լողանալու:

— Մի քիչ սպասիր, իսկուհն կվեի ջացնենք, —
պատասխանեց խաղացողներից մինը, — Կնա կան-
չիր, մյուս ընկերներին:

Շուտով խաղը վերջացավ և մոտակա դռնա-
կից, վորի վրա կախված եր մի ցուցանակ հե-
տևյալ վերնագրով, — «Հանգստյան տուն № 1», փո-
ղոց դուրս չեկան 20-ի չափ մարդիկ՝ դանազան
հասակի: Այստեղ կային չերիտասարդներ՝ 18—
20 տարեկան, կային և հասակավորներ՝ հիսու-
նից անց. դրանցից միքանիսը մինչև գոտին
մերկ էին, մյուսները ոճիքը լայն բացված եր և
թևերը մինչև արմուկները սթթկած: Բոլորն ա-
րևից վառված էին. չերևում եր, վոր դ. անք
վաղուց էին վառվում արևից: Խումբը ուղնոր-
վեց դեպի ծովը:

— Չմանե՞նք մեր հարևանուհիներին մոտ, № 2

հանգստյան տունը, — առաջարկեց մինը: — Զը-
հրավիրենք մեզ հետ գնալու:

— Գնանք, — ասացին միքանիսը, — չեթե միայն
ներանք մեզանից առաջ չեն գնացել:

Հանգստյան չերկրորդ տնից այս խմբին միա-
ցան 20-ի չափ կանայք և բոլորը միասին գնա-
ցին դեպի ծով՝ ուրախ զ ուցելով: Կատակն ու
ծիծաղը վոչ մի բոպե չեյին ընդհատվում: Կա-
նայք ընտրեցին իրենց համար մի գեղեցիկ տեղ,
բաժանվեցան խմբից և գնացին լողանալու: Տը-
ղամարդիկ անցան առաջ և նույնպես գտան լո-
ղանալու հարմար տեղ: Լողանում եյին, զուրս
գալիս ավեր, մերկ պառկում արևի տակ և նո-
րից մտնում ջրի մեջ:

Այսպես անցավ չերկու ժամ: Լողանալուց հե-
տո չերկու խմբերը նորից միացան:

— Հիմա՞ ուր գնանք, տո՛ւն:

— Ինչո՞ւ տուն, ավելի լավ ե գնանք զբոսա-
վայրը և այնտեղ մնանք մինչև ճաշ:

— Լավ, ուղևորվենք, ընկերներ, դեպի զբոսա-
վայրը:

Զբոսավայրում արդեն գտնվում եյին մի չե-
րեք տասնյակ կին և տղամարդ մյուս հանգըս-
տյան տներից: Նրանք փոքրիկ խմբերով նստած
եյին, կամ ծովափի խոտերի վրա պառկած: Մի
քանիսը ծխում եյին, իսկ մյուսները գիրք կամ

բազիր կարգում, չերբորդները խոսում ելին։
— Վորքան լավ ե այստեղ, ընկերներ,— լավեց
մի խմբում, — այնպես չե՛ ինչպես Որեխովո Զու-
չեվում։

— Ե՛ հե, ինչի հետ համեմատեց, Որեխովո-
Զուչեվի. դոնե համեմատելիք Սերպուխովի հետ՝
ելի քիչ-միչ նման կլիներ, — ասաց մի կատակա-
սեր։ Բոլորը ծիծաղեցին։

— Վոչ միայն լավ ե, ասաց մի հասակավոր
մարդ, — այլ և ահագին ոգուտ ե ստանում բան-
վորը՝ ապրելով այստեղ չերկու-չերեք շալաթ.
որինակի համար, վերջրեք հենց ինձ, անցյալ
տարի չես ծալր աստիճան թուլացա գործարա-
նում. վոչ մի հիվանդութուն չունելի, բայց և
ուժ չունելի, հազիվ հազ կարողանում ելի մի
կերպ քաշ գալ։ Ինձ թվում եր, թե շուտով ան-
կարների շարքը կդասվեմ կամ մյուս աշխարհը
կերթամ, բայց բարեբախտաբար մեր գործարա-
նի աշխատանքի պահապանության հանձնաժողո-
վի անդամներից մինը ինձ փրկեց։ Տեսնելով ինձ,
ասաց. «Շատ ես թուլացել Բարսեղ, գիտես ի՞նչ
կանես, փոխանակ արձակուրդդ Որեխովում անց-
կացնելու, զնա հարավ, հանգստյան տուն, այն-
տեղ կվերակենդանանաս»։ Ճիշտն ասած, չես
սկզբում կասկածում ելի, թե սրանից բան դուրս
կգա, սակայն նա ինձ համոզեց և չես մի ամ-

բոց՝ ամիս այստեղ ապրեցի և ճիշտ վոր բոլորովին վերակենդանացած վերադարձա տուն:

Այս տարի հանձնաժողովը նորից վորոշեց չերկուշարաթով ինձ ուղարկել այստեղ վերջնականապես կազդուելու. շուտով կլրանա իմ արձակուրդը և չես միանգամայն առողջ եմ զգում ինձ: Այսպես ել կլինեն այն բոլոր ընկերները, վորոնք գալիս են այստեղ:

— Դա միանգամայն ճիշտ է, — հաստատեցին Բարսեղին խողները, — չեթե տանը մնալինք, արձակուրդն ել դուր պիտի անցնեք, ինչ-վոր ճիշտ է, ճիշտ է:

Մյուս խմբումն ել նուչնպես հանգստյան տան մասին ելին խոսում:

— Ինձ միայն հինգ որ է մնացել այստեղ անցկացնելու, — տխուր ձայնով ասաց մի դեռատի աղջիկ: — Նորից համեցեք ճախարակի մոտ:

— Դե հա՛, ազահություն մի անի, — ասաց մոտը նստած հասակավոր կինը, — լավ հանգստացել ես, կարող ես և աշխատել: Միայն չես ու դու չենք գործարանում, պետք է մյուսներին ել հերթ տանք հանգստանալու: Դու ինքդ լավ գիտես, վոր մեզ նման շատերը կան, մեր արձակուրդը կլրանա, հանձնաժողովը մեր տեղ ուրիշներին կուղարկի: Այսպես հարյուրավորներ կգան կհանգստանան:

Աղջիկը վոչինչ չպատասխանեց, միայն հառաչեց:

Այս ժամանակ լավեց զանգակի բարձր և տևական ձայնը:

— Զանգահարում են ճաշելու: Վեր կենանք, գրնանք, ընկերներ:

Բանվորներն ու բանվորուհիները խոսակցությունը շարունակելով թողին գրոսավայրը և գրնացին դեպի իրենց հանգստյան տները:

Աշխատավորի առողջության պահպանությունը:—

Աշխատանքի վերաբերյալ Սորհրդային որենսգիրքն աշխատավորների միայն աշխատելու ժամանակի մասին չի խոսում: Ամեն մի գործարանում կազմված է աշխատանքի պաշտպանության առանձին հանձնաժողով, վորը զբաղվում է աշխատանքի պայմանների, աշխատանքի պաշտպանության, բանվորների առողջության և կենցաղի բարելավման խնդիրներով: Հանձնաժողովի գլխավոր խնդիրներն են՝ նախ՝ հսկել, վոր բանվորական որը 8 ժամից ավելի չտևի, 2. հոգալ արհեստանոցների առողջապահիկ դրության մասին (աշխատատեղիի մաքրությունը, բավարարնդարձակությունը և այլն), 3. աջակցել աշխատանքի տեսուչներին, 4. հասցնել բժշկական ոգնություն, 5. ուղարկել հիվանդներին սա-

նատորջաններ և հանգստյան տներ, 6. ապահովագրել աշխատավորներին:

Առաջին չերեք խնդիրները բացատրության կարոտ չեն, պետք է միայն մանրամասն խոսել բժշկական ոգնության և հասարակական ապահովագրման մասին: Նախ միջանի խոսք ասենք միջոցների մասին:

Հստ որենքի, ամեն մի արդյունաբերական ձեռնարկություն վճարելով բանվորներին աշխատավարձ՝ պարտավոր է մտցնել պետական գանձարան աշխատավարձի 15 - 20 տոկոսը:

Այս մոլծանքից կազմվում են կապիտալներ, վորոնք ծախսվում են բանվորներին բժշկական ոգնություն ցույց տալու և նրանց ապահովագրելու: Յերբ բանվորը վորեւե ծանր հիվանդությամբ բռնվում է, հանձնաժողովը միջոցներ է ձեռք առնում մի համապատասխան բժշկական հիմնարկության մեջ տեղավորելու նրան: Բացի ծանր հիվանդանալուց, բանվորներն աշխատանքից ուղղակի թուլանում են, սաստիկ հոգնում և չեն կարողանում այլևս աշխատել: Հանձնաժողովն ընտրում է նրանցից ամենից ավելի հոգնածներին, ամենաթուլներին և ուղարկում նրանց հանգստյան տուն՝ գլխավորապես ամառը: Այսպիսի տներ բացված են Սորհրդային միության շատ վայրերում, մանավանդ Ղրիմում և Կովկասում:

Բացի դրանցից, չեբբ բանվորը մի վորևե դժբախտ դեպքով կորցրել է իր աշխատունակութունը, գարձել է անկար (инвалид), նրան արբվում է թոշակ իր մշտական աշխատավարձի չափ: Այս նպատակով կազմակերպված են ապահովագրական գանձարկղներ:

Յեթե վորևե դժբախտ դեպքով մեռնում է բանվորը՝ նրա ընտանիքն է ստանում թոշակ: Իսկ չեբբ բանվորը կամ նրա ընտանիքի վորևե անդամը մեռնում են՝ ապահովագրական գանձարկղը տալիս է նպաստ թաղման ծախսերը հոգալու:

Բանվորն իր հիվանդության ամբողջ ընթացքում ստանում է ապահովագրական գանձարկղից նպաստ իր մշտական աշխատավարձի չափ: Բժշկական ոգնութուն և դեղերը ձրիաբար են ստանում, ինչպես հիվանդացած բանվորը, նույնպես և նրա ընտանիքի անդամները: Հղի կնոջը, վորն որենքով չորս ամիս արձակուրդ է ստանում, գանձարկղն ամեն ամիս վճարում է ամբողջ աշխատավարձը:

Յերեխան ծնվելիս բանվորուհին կամ բանվորի կինը դրամական նպաստ է ստանում ապահովագրական դրամարկղից՝ չերեխային խնամելու համար: Բացի դրանից ծծկեր չերեխա ունեցող բանվորուհին կամ բանվորի կինը սննդյան նրպոստ է ստանում 9 ամիս շարունակ: Վերջա-

պիս, չեթե բանվորը զրկվում ե աշխատանքից և գործազուրկ դառնում, ապահովագրական գանձարկը հրահանգների հիման վրա նսպաստ ե տալիս:

Ահա սրանք են բժշկական ոգնությունն ու հասարակական ապահովագրությունը, վորոնցով ոգտվում ե բանվորը աշխատանքի վերաբերմամբ չեղած որենքների հիմունքով:

Այս որենքների գործադրության վրա հոգում ե աշխատանքի պահպանության գործարանային հանձնաժողովը. հենց նա չել պարտավոր ե հըսկել, վոր արդյունաբերական ձեռնարկությունները ժամանակին և լրիվ վճարեն իրենցից պահանջված տուրքը հասարակական ապահովագրության համար:

7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂՍՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ.

1. Դուք կարգացիք, վոր այժմ բանվորները հավաքվում են արտադրական — տեխնիկական խորհրդակցությունների, քննում են իրենց ձեռնարկությունների հաջողությունն ու անհաջողությունները, բացարձակ ցույց են տալիս կառավարության նրա պակասությունները, և արտահայտում են իրենց ցանկությունները գոր-

ծարանը կամ ձեռնարկություններն ավելի լավ հիմքերի վրա դնելու: Հավաքվում են գործարանային բանվորներն արտադրական ընդհանուր խորհրդակցության. հավաքվում են նույնպես ըստ համքարության և ըստ բջիջի: Յեւ վ այս խորհրդակցություններն առանց ազդեցության չեն մնում ձեռնարկության ամբողջ ընթացքի վրա:

Աչքի ընկնող և փորձված բանվորները մասնակցում են գործարանի և ձեռնարկության վարչական կազմի մեջ. ընտրվում են կարմիր վարիչներ կամ նրանց տեղակալներ: Մի բանի բանվորներ մտնում են արդյունաբերական տրեստի — այսինքն միատեսակ ձեռնարկությունների միության վարչության մեջ, ասել է՝ մասնակցում են մի ամբողջ շարք ձեռնարկությունների, չերբեմն մի ամբողջ տասնյակ գործարանների կամ ձեռնարկությունների կազմակերպության և կառավարության:

Նաև տեսնում ենք, վոր բանվորի գրությունն առաջվա նման պատահմունքի և տիրոջ քմահաճույքներին չի թողնված: Բանվորի աշխատանքն այժմ չի կարող վորոշ սահմանածից ավելի տևել: Բանվորական որվա տևողությունն ընդհանուր կանոնների համեմատ 8 ժամից ավելի չպիտի լինի և ով ստիպի բանվորին որվա ըն-

Թացքում 8 ժամից ավելի աշխատել, դատի կեն-
թարկվի: Այժմյան ժողովրդական դատարանն,
առաջնորդվելով աշխատանքի մասին չեղած որեն-
քներով, խստիվ պատժում է բանվորների շա-
հերի դեմ գնացողներին. իրենք դատավորները
և սրանց առընթերականերն աշխատավոր դասից
են, և սրանց համար պրոլետարիատի շահերը հաս-
կանալի և թանգ են:

Բանվորների շահերի պաշտպան հանդիսանում
են պրոֆմիլությունը և գործարանային տեղկոմ-
ները, վորոնք գոյություն ունեն ամեն մի գոր-
ծարանում և ձեռնարկություններում: Նրանք ձրգ-
տում են բարելավել բանվորների զրությունը,
բարձրացնել նրանց աշխատավարձը, վարձատրել
յուրաքանչյուրին ըստ իր աշխատանքի, սակայն
վոչ ի ֆլասս արդյունաբերության և ձեռնարկու-
թյան:

Նրանք աշխատում են բարելավել բանվորնե-
րի բնակարանային պայմանները, կազմակերպում
են նրանց համար զարգացուցիչ միջոցներ, հիմ-
նելով ժողովարաններ, դասընթացներ, եքսկուր-
սիաներ, մի խոսքով այն ամենն՝ ինչ նպաստում
է բանվորների նյութական և հոգեկան կյանքի
բարձրացմանը: Բանվորների, նրանց կանանց և
լիբեխանների կյանքը, կենցաղն ու առողջու-
թյունը կազմում են պրոֆմիլությունների նպա-
տակը:

Ի՞նչո՞ր մեծ գործարաններն ու ձեռնարկությունները հեղափոխությունից հետո ազգայնացված են. այսինքն պատկանում են ժողովրդին և վոչ թե մասնավոր անձերի՝ բուրժուաների և կառավարվում են պետական վարչությամբ: Սրա հետ միասին ընկավ աշխատանքի նախկին շահագործումը կապիտալի կողմից: Սրանից ել գործարանների և ձեռնարկությունների բանվորները մեր չերկրում դադարեցին վարձվորներ լինել, ինչպես ելին մինչև հեղափոխությունը:

Այն ժամանակ գործարանատերն իր քմահաճույքով վարձում էր, վարձատրում, պարզկատրում և արձակում բանվորներին: Վերջիններս բացի աշխատավարձից վոչնչով կապված չեյին գործարանի կամ ձեռնարկության արտադրության և բաղդի հետ: Այժմ բանվորները չեն աշխատում գործարանատիրոջ համար, այլ մասնակցում են ընդհանուր գործին՝ արտադրության: Գործարանի հաջողությունն իրենց սեփական հաջողությունն է, գործարանի ընդլայնումը նրանց հպարտությունը, նրա անհաջողությունները՝ նրանց սեփական դժբախտությունը: Մյուս կողմից նրանք գործարանի վարչության համար սոսկ աշխատավոր ձեռներ չեն, այլ թանգագին աշխատակիցներ, վորոնցից կախված է արդյունաբերության հառաջադիմությունը և ձեռնար-

կուլթյան հիմնավորումն ու ծաղկումը: Այս նոր հարաբերության վաչե հիմնված մեր հուշերը՝ տեսնելու արդյունաբերության վերածնունդն ու զարգացումը: Բանվորների դրությունը գործարաններում և ձեռնարկություններում առաջվանից միանգամայն փոխվեց. նրանց վերաբերմունքը դեպի ձեռնարկությունը բոլորովին նոր է, չտեսնված վոչ անցյալում և վոչ ել մյուս պետությունների մեջ, բացի մերից:

Ճիշտ է, փոքր գործարանները և ձեռնարկություններն այժմս ել գտնվում են մասնավոր մարդկանց — կապիտալիստների ձեռքերում, այստեղ տերերն իրենք կազմակերպում են արտադրությունը և վարձում բանվորներ: Սակայն այս մասնավոր ձեռնարկությունների մեջ ևս նախկին տերերի քմահաճույքներին սահման է դրված: Պրոֆմիությունները վորոշում են աշխատանքի վարձատրության կոպարները և սրանք պարտադիր են գործարանատերերի համար, պետական տեսուչները հետևում են, վոր տերերը կատարեն աշխատանքի մասին չեղած որենքները, ժողովրդական դատարանը պաշտպանում է աշխատավորների շահերն, այտեղ արդեն այլևս տեղի չեն ունենում նախկին շահագործությունները:

2. Աշխատավորների դրությունը չափազանց

փոխվեց նաև գլուղում: Սակավ հող ունեցող գլուղացիները դադարեցին իրենց հարևան կալվածատերերի հարատև պարտապանները կամ նրանց հոտազր լինելուց: ԽՍՀՄ մեջ հողից կարող ե ողտվել միայն նրա վրա աշխատողն, այսինքն նա, վոր մշակում ե: Վարձվոր աշխատանքին կարելի չե դիմել միմիայն ծայրահեղ դեպքում, չերբ, որինակ, ընտանիքի մեջ պակասում են բանվորական ձեռքեր: Կալվածական հողերը խլված են սեփականատերերից և նրանց մեծ մասը հանձնված ե աշխատավոր գլուղացի-ության՝ ոգտվելու: Յեվ գլուղացիների հողի այս հավելումն արդեն պետք ե բարելավի և մեծացնի նրանց անտեսութունը:

Սրա հետ միասին գլուղացիներին հնարավորութուն ե արվում բարձրացնելու իրենց տրնտեսության վորակն, իրենց աշխատանքի արտագրութունը:

Իուք կարդացիք, թե ինչպես Պսկովի նահանգի Բըրիդինոյան կոմունան (չերես 25.) սկսեց գործել նախկին կալվածատիրոջ կալվածքում: Այս կոմունայի ամեն մի անդամը միայնակ չեր աշխատում, այլ մյուսների հետ միասին՝ ընդհանուր ծրագրով: Ինչ անհասանելի եր առանձին գլուղացուն, հասանելի դարձավ միաբան կոմունային: Նրա չեռանդուն գործունեյու-

թշուհը կառավարութեան կողմից արգելքի չեր հանդիպում. ընդհակառակը, կառավարութշուհը խրախուսում եր գյուղացիների այդ տեսակ կուլ-լեկտիվ տնտեսութշուհը և այդպիսի փորձերը պետք է փոր բազմանան:

Պետական իշխանութշուհը տնտեսութեան բար-գաւաճման գործում ձգտում է նպաստել փոշ միայն կոմունարներին, ալ և գյուղական համայնք-ներին, ընկերութշուհներին և նույնիսկ առան-ձին չերկրագործներին:

Ինչ առաջ մատչելի չեր ունենոր կալվածա-տերերին, այժմ սկսում է պատվաստել գյուղա-ցիութեան մեջ գյուղատնտեսական կատարելա-գործված գործիքների գործածութշուհը, խոտա-ցանութշուհն ու բազմադաշտյան վար ու ցան-քան, արջրաի տեղերի փոռոգումը, ճահիճների շորացումն, անասունների տեսակի ազնվացումը, հում նյութերի մշակումն, էլեքտրական շ" բժիշ-ների գործածութշուհը, փաստակար բույսերի փո-շնչացումը: Բոլոր այսպիսի միջոցները պահան-ջում են զբամական ծախսեր և ամբողջ գյուղի կամ գյուղացիական խմբերի միահամուռ գոր-ծակցութշուհ: Պետութշուհը պարտավոր է իր միջոցների համեմատ ոգնութշուհ հասցնել գյու-ղացիներին այսպիսի ձեռնարկութշուհներին մի-ջոցին: Նա զարթեցնում է գյուղացիների ինքնա-

գործունեությունը և խրախուսում՝ փոխառվու-
թյամբ, մասնագետների խորհուրդներով, պա-
հեստներով, դասախոսություններով, դասընթաց-
ներով և այլն:

Գյուղացիական ամենաաղքատ տնտեսություն-
ներին արտոնություններ են տրվում հարկերը
վճարելու և այս—այն նպատակով, վոր նրանք
չդիմեն հարուստ մարդկանց ոգնություն և կախ-
ման դրություն մեջ չնկնեն:

Պետությունը վերացնելով անհատական խո-
շոր հողատիրությունը, վոչնչացրեց գյուղացի-
ների ճորտական կախումը կալվածատերերից և
թույլ չի տալիս նույնպիսի ճորտական կախում
աղքատ գյուղացիների՝ հարուստներից: Այսպիսով
բանվորի և գյուղացի-չերկրագործի աշխատանքը
կազմում է պետության գլխավոր հոգսը: Այդ աշ-
խատանքը պաշտպանվում է ամեն տեսակի զըր-
կանքներից և հովանավորվում պետական հիմնար-
կությունների կողմից:

3. Մինչև 1917 թ. հեղափոխությունը ցարա-
կան կառավարությունն արհամարհում էր բան-
վորների և գյուղացիների կարիքները: Նա շատ
անգամ իմնաս աշխատավորների պաշտպանում
էր ունևոր մարդկանց շահերը, զորավիզ հանդի-
սանալով ազնվական հողատերերի և կապիտա-
լիստ ձեռնարկողների իրավունքների և արտո-
նությունների:

Այն ժամանակ պետական բոլոր հիֆարկու-
թյուններն այնպես ելին կազմակերպված, վոր
իշխանությունը կենտրոնացած էր ունևոր դա-
սակարգի ձեռքում: Աշխատավորների բաժինն
աշխատելն ու հպատակվելն էր: Սակավաթիվ
ազնվականութունն ու բուրժուազիան չինով-
նիկական որդանների և միլիցիական կանոննե-
րի շնորհիվ տիրապետում էլին բազմաթիվ գյու-
ղացիության և պրոլետարիատին:

Այժմյան պետական կազմակերպությունը
ԽՍՀՄ մեջ այլ է:

Միապետի կամ ցարի իշխանությունը տապալ-
ված է, բուրժուազիայի ուժն արմատից կտրը-
ված՝ խլելով սեփականատերերից հողը, գործա-
բանը, ձեռնարկությունները, բանկերը:

Միության մեջ ամբողջ իշխանությունը
պատկանում է աշխատավոր ժողովրդին՝ իդեմս
աշխատավորների ներկայացուցիչների խորհր-
դին:

Ովքեր չեն աշխատում, ով պարում է վոչ իր
աշխատանքի չեկամուտով, իրավունք չունի մաս-
նակցելու խորհուրդներին, չի կարող ստանձ-
նել վորևէ պետական, նույնիսկ ամենահասա-
րակ պաշտոն: Ովքեր ոգավում են վարձու աշ-
խատանքով իրենց արհեստանոցներում կամ գոր-
ծարաններում, ովքեր ապրում են առևտրով, ի-

րենց ընտանիքի հետ, չեն ընտրում և չեն ընտրվում խորհրդի անդամ:

Աշխատանքը բոլոր քաղաքացիների պարտականությունն է համարվում և այս պատճառով շաշխատողները զրկված են վոչ միայն կառավարելու իրավունքից, այլ և զենք կրելու, բնակարանային ընկերություններին մասնակցելու, պրոֆեսիոնալ զպրոցներում ուսուցչությունելու իրավունքներից և այլն:

Բուրժուազիայի այս իրավագրկությունը ԽՍՀՄ մեջ արտահայտվում է հետևյալ լոգունգով. «շաշխատողը չի ուտում»:

Ընդհակառակը, բոլոր աշխատավորները, նախ և առաջ չերկու սեռի պրոլետարիատը, 18 տարեկանից սկսած՝ միանգամայն անկախ նրանց ազգությունից և բնակավայրից, ոժտված են քաղաքական գործունեություն իրավունքով. նրանք կարող են մասնակցել գործաւանների և ձեռնարկությունների խորհուրդներում, կարող են ընտրել և ընտրվել ամեն տեսակ խորհուրդների անդամ: Նրանք կարող են անդամ ընտրվել գործադիր կոմիտեների և ստանձնել զանազան պաշտոններ: Յեվ, հիրավի, այժ ւս շատ պաշտոններ, թե տեղերում և թե կենտրոնում, տրված են մուրճի և արորի մարդկանց այսինքն այնպիսիներին, վորոնք չեղել են և այժմ ել են տոնմական բանվոր, կամ տոնմական հողագործ:

Միայն բանվորներն ու գյուղացիները կամ բանվորա-գյուղացիական շահերին վորձված կողմնակիցները կարող են պաշտօնյաներ լինել կամ վորպես ձեռնարկությունների բարձր վարիչներ, կամ վորպես պետական կարգադրությունների կրտսեր գործադիրներ: Այս պատճառով էլ մեզ մոտ կառավարութունը կոչվում է բանվորա-գյուղացիական, տարբերվելով նախկին ցարական կառավարութունից, վոր արհեստական էր, բուրժուական: Նա տարբերվում է նաև Անդլիայի, Ֆրանսիայի և այլ իմպերիալիստական կառավարություններից:

Բուրժուական նախկին տիրապետութունը, վոր կանգնած էր արգյունաբերական ձեռնարկությունների, առևտրի ու բանկերի զլխին, տապալվել է. նրա տեղը կանգնել է բանվորական դասակարգի իշխանութունը, վորին առաջնորդում է կոմունիստական կուսակցութունը:

Ապագայում չերկրի ամբողջ բնակչութունը չպետք է բաժանվի դասակարգերի, բայց քանի դեռ գոյություն ունի բուրժուական դասակարգ և նրան կողմնակիցներ կան արտասահմանում, կապիտալիստական չերկրներում, մինչ այդ բանվորական դասակարգը պետք է իր ձեռքի մեջ պահի դիկտատուրական իշխանությունն, իրեն վերապահի լիակատար տիրապետությունը և

պրոլետարական իրավունքների պաշտպանութ-
վունքը:

Բոլոր պետական հիմնարկությունները, համագումարների և ժողովների մեջ, ամենաստորից սկսած մինչև ամենաբարձր կենտրոնականը, նախագահում են և տնօրինում աշխատավորները—բանվորներն ու գյուղացիներն, առանց բուրժուազիայի վորևե միջամտության: Ահա սրանումն է մեր խորհրդային պետություն գլխավոր առանձնահատկությունը:

4. Նրա չերկրորդ ելական տարբերությունը հանդիսանում է ազգությունների իրավունքների հավասարությունը: Նախկին ցարական Ռուսաստանում, նրա բազմազան և բազմալեզու բնակչությամբ կառավարությունը արհամարում էր ազգային լուգունները, բազմաթիվ ժողովուրդ-դները՝ ուկրաճնացիների, թաթարների, հրեաների, հայերի և մյուսների առանձնահատկություններն ու սովորությունները: Այդ կառավարությունը ցանկանում էր վերախոխել ընդարձակ պետության բոլոր բնակիչներին Վեիկոուս տիպի կամ ինչպես այն ժամանակ ասում էին՝ այլազգիներին ուսացնել:

Ցարական կառավարությունը ցանկանալով միայն ինքը կառավարել, ամեն կերպ խանգարում էր ազգությունների մտավոր և հասարակական

զարգացման, նա հալածում էր նրանց ինքնու-
րուչնության ձգտումը, դուրս էր ձգել նրանց
մայրենի լեզուն դպրոցներից, դատարաններից
և հիմնարկություններից: Այնտեղ՝ ուր չերկուչե-
րեք ազգություններ ելին ապրում միասին, (ինչ-
պես, որինակ՝ Կովկասում) այնտեղ կառավարու-
թյունը նրանց զրգուում էր միմյանց դեմ և
նույնիսկ թշնամացնում, վո, պեսզի այդ միջոցով
թուլացնի նրանց ուժերը, վորպեսզի առանց դի-
մադրության կարողանա հրամայել:

Յարական Ռուսաստանը մի ահագին կենտրո-
նացած կառավարություն էր, այսինքն այնպիսի
մի պետություն, վոր կառավարվում էր այն
ժամանակվա մայրաքաղաք Պետերբուրգի պաշ-
տոնյաների հրամաններով, տասնյակ վոչ Վելիկո-
ուս ժողովրդների բացարձակ ճնշումով: Յուրա-
քանչուր ազգություն ինքնըստինքյան փոքրա-
մասնություն էր կազմում ահագին չերկրի մեջ
և այս պատճառով էլ կառավարությունը կարո-
ղանում էր բացարձակ գերակշռող հանդիսա-
նալ:

Այժմ նույնը չե. հեղափոխությունից հետո
ամեն մի ազգություն, վոր ապրում է նախկին
Ռուսաստանի սահմաններում, ստացել է ինքնու-
րոշման իրավունք, նա կարող է կամ առանձին,
բոլորովին անկախ պետություն կազմել, կամ լի-

նել խորհրդային ընդհանուր պետության մի ինքնավար մաս:

Մեր խորհրդային պետությունը մի շարք խորհրդային հանրապետությունների միութունն է:

Այժմ այս միությունը պարունակում է իր մեջ չորս մեծ հանրապետություններ.

1) ՌՍՖՍՀ կամ Ռուսական Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութուն. 2) ՈւՍՍՀ կամ Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդանրապետություն. 3) ԲՍՍՀ կամ Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն. 4) ԱՍՍՖՀ կամ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետություն: Այս չորս հանրապետություններից առաջինը՝ ռուսականը — ամենամեծը, ներկայացնում է Վելիկոռուսների և մի քանի ինքնավար պետությունների՝ թաթարների, բաշկիրների, թուրքեստանի, կարելների, չակուսների, բուրյատների, լեռնականների, Դաղստանի, Ղրիմի և Վոլգայի գերմանացիների միութուն: Այս պատճառով ել ռուսական հանրապետությունը կոչվում է Ֆեդերատիվ. այսինքն միացած:


Ճիշտ այդպես ել ԱՍՍՖՀ հանդիսանում է Անդրկովկասյան հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի միություն: Այսպիսով ԽՍՀՄ շատ հանրապետությունների

միացնում ե մի ամբողջական պետական կազմակերպութիւն մեջ: Այս միութիւն մեջ վոչ մի ազգութիւն չպետք ե ճնշի մյուսին, բոլորը միացել են խորհրդալին կազմակերպութիւն մեջ, մերժելով բուրժուա-կապիտալիստական կազմակերպութիւնը: Սակայն նախկին ռուսական կազմութիւն վոչ բոլոր ազգութիւնները ցանկացան մտնել այս սոցիալիստական միութիւն մեջ. Լեհաստանը, Ֆինլանդիան, Եստոնիան, Լիտվան ե Լատվիան կազմեցին առանձին պետութիւններ ե պահպանեցին բուրժուական քաղաքական կազմակերպութիւնը:

Սակայն նախկին Ռուսաստանի առանց այս անջատված մասերի ել ՊՍՀՄ հանդիսանում ե մի ահագին չերկիր 130 միլիոն բնակիչներով. մի չերկիր, վոր դարերի ընթացքում կազմակերպվել ե աշխատավոր բանվորութիւն արդյունքով ե այժմ հայտարարում ե աշխատանքը նոր կյանքի հիմունք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Բոլորը սերտ կապված են	3
2. Ստիպողական և ազատ աշխատանք	10
3. Հողն ու մարդիկ ԽՍՀՄ մեջ	22
4. Բրիգինոյան կոմունա	25
5. Աշխատանքի պահպանությունը	30
6. Սոցիալական ապահովություն	40
7. ԽՍՀՄ քաղաքական կազմակերպությունը	49



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044634

(146)

X

A $\frac{1}{7990}$



ԳԻՆԸ 15 ԿՈՊ.